Գաղտ մարդիկ ուղարկեցին Խութեցիների մօտ (ոմքա ԻբՐՆԱԽՕ՝ անուամբ յայտնի բարբարոսներ են), որոնք դրդեցին Նոցա Իւսուփի վերայ յարձակիլ, որովհետեւ նա էր գերի տարել Նոցա իշխան Բագրատին. երկրի իշխաններից եւ մեծամեծներից իւրաքանչիւրը ուղարկեց հեծելազօր եւ հետիոտ զօրագունդ Նոցա օգնութեան: Խութեցիք յարձակեցան Իւսուփի վերայ Տարօնում, մինչ նորա մարդիկ ցրած էին գիւղերում, սպանեցին նորան եւ յափշտակեցին նորա ամբողջ բանակը:

Հաւատացելոց ամիրապետ Ամուտավակկիլ ապա կարգեց Հայաստանի վերայ կառավարիչ Բուղայ մեծին. սա եկաւ Թիֆլիս եւ ձերբակալեց Մուսայ Ի. Զուբար՝ին, որին հաճոյ էր Իւսուփի սպանումն եւ որ՝ պահելով Բագրատի կողմն՝ օգնած էր այս իրագործել: Բուղայ պատերազմեցաւ Խութեցոց հետ, սրի մատնեց եւ գերեց Նոցանից մեծ բազմութիւն: Ապա պաշարեց Աշոտ Ի. Համազայ Ի. Գագիկ Վասպուրականի իշխանին Աղբակում, ստիպեց Նորան վայր իջնել իւր ամրոցից եւ տարաւ Նորան Սամառայ:

Բուղայ արշաւեց Վիրք, յաղթեց Իսահակ Ի. Իսմայելին եւ սպաննել տւեց Նորան կապանքների մէջ: Նւաճելով Վիրք նա (այնտեղ) փոխադրեց Աղուանից բնակիչներից: Առհասարակ խաղաղացրեց Սիսականի Հայերին՝ ապստամբ, խռովարարաբ քրիստոնեաներին եւ այլոց, մինչեւ որ բարեկարգեցաւ երկիրը արդարութեամբ, չբ իրան նմանը չուներ: Ապա մեկնեցաւ Սամառայ 241 թ.

---

1 Հմմտ. Թովմա Արծրունի «...եւ յաղագս խրթնի եւ անհետազօտելի խօսիցն եւ բարուցն կոչին (բնակիչք լերինն) Խոռ» (Ա. Է.):